

ծառայութիւնները, հակառակ 1948ի Պաղեստինեան պատերազմի հետեւանքով կրած կորուստներուն, եւ կրկին տեղափոխութեանց:

Պատրիարք Սրբազան Հայրը "անակնկալ" մը եւս յայտնեց, ներկայացնելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջին Սրբազանգոյն Կաթողիկոսի Օրհնութեան կոնդակը, որուն ընթերցումը՝ Հոգ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեանի կողմէ, ունկնդրուեցաւ յոտնկայս:

Տիար Նուպար Արսէնեան, իր եւ իր տիկնոջ՝ Սիրարփիին կողմէ, իր երախտագիտութիւնը յայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետէն ընդունած օրհնութեան եւ կոնդակին համար, եւ յուզումով յիշեց տարագրութիւնը իր ժողովուրդին, իր ծնողաց հաւատքը, իր հօրը հրաշագործ դեղը, հայ ընտանիքին կարեւորութիւնը, եւ շնորհակալութիւն յայտնեց իր գաւակներուն՝ անոնց կազմակերպած "անակնկալին" համար, եւ Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան եւ բոլոր բարեկամներուն:

* * *

Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր դրած հեռագիրը Յորդանանի Վեհաշուք Հիւսէյն Թագաւորին, շուտափոյթ ապափնում մաղթելով անոր: Նաեւ Յորդանանի Հաշիմական Թագաւորութեան Պալատէն, յանուն Հիւսէյն Թագաւորին դրկուած շնորհակալութեան հեռագիրը:

His Majesty King Hussein II
The Royal Palace Amman
Hashemite Kingdom of Jordan

August 26, 1992

On behalf of Armenian Patriarchate of Jerusalem and Armenian community on both sides of River Jordan we extend to Your Majesty our heartfelt good wishes on your successful surgery praying for speedy recovery asking God to preserve you and grant you joy and long life.

Archbishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem

Archbishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem

August 31, 92

I have been commanded by His Majesty the King to convey to you and through you to the Armenian Patriarchate of Jerusalem and the Armenian community on both sides of the River of Jordan His sincere appreciation for Your warm message wishing Him a speedy recovery from His recent surgery and kind sentiments of good wishes.

Dr. Khalid Al Karaki
Chief of the Royal Hashemite Court